

79

3068

№ 38

«ՅԱՌԱՂ»-ի ԳՐԱԳԱՐԱՆ

№ 38

ԱՐԱՄԱՅԻՆ

~~3068~~

Վ Ն Ա Ս Ա Կ Ա Ր Ը

(Շրջիկի յուշատետրից)

ԳՐԱՆԻՒՆ 4 409.

ԹԻՖԼԻՍ

1907

891.99
Ա-83

5790 ԵՐՈՏՉՏՕ, Ի ՏՆ

15 APR 2009

№ 38

«ՅԱՌԱՋ»-ի ԳՐԱԴԱՐԱՆ


№ 38

19 NOV 2010

891.33

Ա-83

ՈՐԵՄՆԵՆՍ



Վ Ն Ա Ս Ա Կ Ա Ր Ը



(Շրջիկի յուշատետրից)

ՓՐԹԼԻՍՏ

1907



1566-2001

21.02.2013

13 APR 2008

13 NOV 2010

27919

44888888



საქართველოს ეროვნული ბიბლიოთეკა

(საქართველოს ეროვნული ბიბლიოთეკის)

Тип. «Братство» ♦ Ст. «Бераяри-Белен»
ТИФЛИСЬ



1265-2009

ყ ვ ა ს ა ყ ა რ ც

(*ცრწილი ჟიუჯანთებრიც*)

I

უხეფი ატარებდი, რაჟც აქტუა და ჯთაყბი:
 «როცა ხე ოჯაფიოთუბენი» — აჯყყბუ ლე
 ყრბი, ყრბაყბი რარბეკაწმბეჩეცა ძეხლე, ხახაჯე
 ხეწახლია ლე, სო ზხაყბა ყაბე, ხნი ლ ხნი ზხაყ-
 ლაბორ ლ დაძხელები:
 ჟეხაყ ლ ჯთაყბი, რაჟც ჯთა ხმ ჟოგზად.
 ხაბობდი ხმ დაწახაყარბი ქრავ ლოგადა დაბი
 თახი: ლაე რანი ლ ხანჯოთოთუბიენი. რაჟც ხე
 ჯეხი ლაროყ: ბრახაზენი, ჯოგზეხი, ხეჩაყრ ქაჯი-
 ბილი:
 ჯოგზე, ოთწახაჯი, ლახეხი, აწხეჩაყაყ, ლოთაყ-
 ლაყ, ბეჩხერი, ხეხი, ბოჯ, არადა... ხაჯადაქანი
 ლე, ლ «ქუხაახაყარ», აქტუა ლე ბეჩაყბე:
 ხეხაყრ, ყრბაყბი ლე, ხეხი, ხეხი, ხეხი, ხეხი, ხეხი
 — ბოჯ ლაყ, ხნი, ჯე ლაყ, — ზარეჩი, ზრანი,
 ბეჩხერი, ხეხი, ხეხი, ხეხი, ხეხი, ხეხი, ხეხი, ხეხი
 ჟიუჯანთებრი, ქაჯი, ჯიუჯანთებრი, რაჟც ხა-
 ლი, ხეხი, ხეხი, ხეხი, ხეხი, ხეხი, ხეხი, ხეხი
 — «ბრახი», ხეხი, ხეხი, — აჯთოთუბანი

նա, չորս կողմը նայելով, կարծես վախենում էր, թէ ուրիշ լսող կը լինի:

— Ի՞նչ էին ուզում:

— Քեզ... Օֆիցերը ոտները գետինը թակեց. շատ բարկացած էր:

— Ո՞ւր մնացին:

— Գալիս են այս ուղղութեամբ. — վերջացրեց գիւղացին, և նայելով դէպի այն կողմը, որտեղից «նրանք» պէտք է գային, շտապով առաջ անցաւ:

Խեղճ մարդ. նա էլ էր վախենում: Ախր կարող էին յանկարծ տեսնել ինձ՝ հետ խօսելիս ու... պրծաւ...

Իրիկն սղէմին միայն կարողացայ շարդած ոտներով, բռնորովին թռչացած՝ հասնել այն գիւղը, ուր դիմում էի:

II

Գիւղացիք հաւաքել են: Վշտի մէջ թաղւած, մտահոգ, տանջւած մարդիկ են, խօսքի ծարաւ. եկել են «խօսք» լսելու: Նայում են նրանց կնճռոտ դէմքերին, կոշտացած ձեռներին, և ինքս-ինձ մտածում. — ինչո՞վ կարող եմ մխիթարել սրանց. ի՞նչ ասեմ, ի՞նչ խօսեմ», գլուխս սարսափելի կերպով ցանում է, և երկու բառ արտասանելու ոյժ չեմ գտնում իմ մէջ:

Բայց նրանք սպասում են:

— Ի՞նչ ասեմ, — վերջապէս դժուրում եմ նը-

բանց, — ուրիշ բարեկարգ երկրներում երբ մարդիկ զանազան կողմերից իրար հանդիպում են, ամենից առաջ հետաքրքրութեամբ միմեանց հարց են տալիս. — նոր ուսումնարան շինեցի՞ք. երկաթուղին հասա՞ւ մինչև ձեր գաւառը. բանի՞ լրաւիբը էք հրատարակում. քանի՞ բժիշկ աւելացրիք, և այլն, և այլն: Իսկ ձեզ... ձեզ ինչ կարող եմ հարցնել. այնպիսի դառն օրեր ենք անցկացնում, որ հոյնիսկ չեմ վրստահանում սովորական հարցը ձեզ տալու, թէ՛ — «քէֆներդ ինչպէ՞ս է»: Ինչպէ՞ս կը լինի քէֆներդ, երբ տանք մի կտոր հաց չուհիք սոված երեխաների լացը դադարեցնելու, իսկ այնտեղ՝ մարակով ձեր վերջին պղինձն են վաճառքի հանում, որոշած տուգանքի գումարը լրացնելու: Ինչպէ՞ս կը լինի քէֆներդ, երբ ձեր կողքին ձեր իսկ ընտանիքի պատիւն է արատաւորւած, օջախը պղծւած, և դուք չր գիտէք ինչ տեղ դիմել, ում բողոքել... Այն, եղբայրներ, ծանր է, ծանր մեր դրութիւնը. անողոք են մեզ վրայ իջնող հարւածները, իսկ մենք՝ անպատրաստ այդ հարւածներ տեղացող բաղուկը մի կողմ հրելու ևւ դիւ Աստուած գիտէ, թէ է՛լ ինչեր են սարքւած, ի՞նչ դաւեր են նիւթւած մեզ համար...»

Գլուխս պատուում է. գիւղացիները տեսնում են գունաթափուող դէմքս, և — «բարի գիշեր» ասելով՝ մէկ-մէկ հեռանում:

444 Եւոյժմարդի քղՊՊՊՊ զիդոս — քմաց
 Եւոյժմարդի քղՊՊՊՊ զիդմերոս մարամար թիրդան
 — 41 — Անն մեր նաչարնիկն Երեւաքում, որ դու
 Ֆրասակար մարդ էս. — առաւօտեան — դարձու
 ինն գիւղի, տանուտէրութի աւելացնելով. — բայց
 Ես չեմ հաւատում: Ապերք յալ չիմ գնասկա
 նում, թէ ինչն, որոյց ինն. այնպէս է թողում,
 որ դու պմննիկն Ֆրասակար չես միայն. — քմ
 — սլ — Ինչ, սնն, — պնդեցիկ էս, — թող մարդը
 լսեն. — չեմ նեղանայ: մարդարիսս հոմանա
 յոյ — Ուղում էմ աւել, սոր դու թեմ Ֆրասակար
 չես, բայց տարօրինակ մարդ էս, — էնպէս է մի
 անասիրտս ցոյս յղմամսկոյն ճախս գիւ
 — դո — Ինչպէս, պարզաստ: մտնա վայ, — սոյ
 ես — Այ հէնց օրինակիս համար, ինչպէս քեզ
 պտիպում թողնել մտնն ոչլանտս սարտս քոյ
 ընկնել մի օր կուշտ, մի օր սոված քոյս կամ
 յայն գիւղում թաղանել, — միտ հալածական,
 միտ անհանգիստ: Մինչդեռ յարքոն ճունո
 մով կարող էիր համարք մտի աշխատել,
 հնձ լաւ պարել, հնձ կրել մեծ պատուի տէր
 դանաւարդս յայնս զմն թոյ զյմնմա յայն
 — 4 — Ի հարկէ կարող էիր յոկ մնացած խեղճ
 գիւղացիներին հաննո ոկ պէտք էր քմամէր
 չէ որ նրանք հնձ լամ պարեք կն ուղտեմ յայն
 որ նրանց էս պէտք է ցոյց տալ նոյն ճանա
 պարհները, որ զէպի քաթատարութիւնն է
 տանուտէրայ — մ սցեյք բազմամար մ
 — Բոլորի դարդը քեզ չեն մեկի մնաչէն,
 մենակ դու աշխարհի բախտը խօ չիս փոխելու.

ոյոց ըսայ Եւոյժմարդի զիդմարդի մոցմա
 ախազան-բարադան ինչ որ գրեւեր է, — էնպէս
 էլ գնալու է: Մի բան էլ եմ ուզում մայել,
 բայց վախեցում եմ նեղանաւ: — իսկ — սոյ
 — 2 — Եւոյժմարդի Ես քեզ առաջոց խնդրեցի,
 որ պարզ խօսես: — սոյ — Եւոյժմարդի
 — Ասում էմ, — ճիշտ է, նպատակը քարից է,
 և լաւ էլա բաներ էս քարոզում, բայց եթէ որ
 մի քիչ կրկար մտածում եմ, — յակ-գրուիս ան
 լիս, — դուրս է գալիս, որ դու ալը շատ մարդ
 կանց բերնի հացը կտրել էս ուզում: — իսկ —
 — Ինչպէս քեզ ու ախանջ արածագ՞ ոչն
 զբաւթեմք լուսմէին մեր խօսակցութիւնը,
 և իս գրում էի, — թէ նրանք ինչպիսի մանամ
 բերութեամբ են սպասում իմ պատասխանիս.
 նրանք գիտէին, որ էս յարց ու պատիւ ճա
 նաչող մարդ չեմ, որովհեպէ բոլոր յարկեր
 ցեցերին, — հարւածում էի լսանն, — տեղ չե
 ամեն ժամանակ: — Այդ պարտաւոր հրանք
 հետքը բոլոր լիկամք հայեցքներն ինն էին
 յառել: Եւ էս թողնելով իրօպակցիս, — անխա
 պէս դարձայ գիւղացիներին. — սոյ — չն —
 — Կեցէք, եղբայրներ, — ան տանուտէրն յայ
 սում էս ոյս էս շատ մարդկանց — բերնի հացը
 կտրել եմ ուզում: — սխալ է: Ընդհակառակը,
 էս ցանկանում եմ քիչ մարդկանց հացը կրտ
 բել, որպէսզի շատ մարդիկ հայ ունենան: Այդ
 քիչ մարդիկն են, որ շատերի ջանին ընկած
 ծծում են նրանց դնեցած չընեցածը: Պարզ
 օրինակ. հայեցէք ձեր տանուտէրին, — մշակու
 թիւն չի անում, վար չի անում, գործի վրայ

անքուն գիշերներ չի անցկացնում, բայց բոլորիցդ էլ լաւ է ապրում, հարուստ է, երեսներին լաւ հագնում է, ցորեն հաց է ուտում. ինչո՞ւ. որովհետեւ ուժեղ է, և փոխանակ այդ ոյժը արդար գործերում ցոյց տալու, ընդհակառակը, մաշկում, կեղեքում է ձեռքն ընկածը, դժբախտացնում է բազմաթիւ մարդկանց, միմիայն ինքը բախտաւոր լինելու համար. Եւ մենակ տանուտէրը չէ. ամեն գիւղում նրա պէս մի տասը հոգի կը լինին, որ ֆնացած գիւղացիութեան քրտինքովն են ապրում: Ահա հէնց այդպիսիներն են համար է, որ ասում եմ.— դուք իրաւունք չունիք առանց աշխատանք գործ դնելու՝ հարստանալ, յղփանալ ուրիշի հաշիւն. դուք էք սարդերը, որ ծծում էք աշխատաւոր ժողովրդի արիւնը: Եթէ ուզում էք ապրել, ապա դուք եւ աշխատեցէք, դուք եւ քրտինք թափեցէք:—Այս է, որ ես ասել եմ միշտ, և միշտ էլ պէտք է կրկնեմ: Եւ միթէ իմ այս ասածներիցս այն է՝ դուրս գալիս, թէ ես մարդկանց հացը կտրել եմ բւղում:

—Ո՛չ, ո՛չ, դու շատ ճշմարիտ և մեր սրտի միջիցն ես խօսում, — լսեցի գիւղացիների խրախուսական ձայնը, որ իմ ներկայութեամբ իրենց քաջ էին գոլում, — ճշմարիտ ես ասում... մենք անում ենք, ուրիշներն են կշտանում. իսկ մենք միշտ աղքատ: Բայց ո՞վ է մեզ հասկացրել. մեզ այնպէս են սովորեցրել, թէ այդպէս էլ պէտք է լինի. այսինքն՝ ուժեղներին...

պէտք է կերակրենք, բախտաւորացնենք մեր հաշիւն: — Այժմ հասկացայ, — մրմոաց տանուտէրը. — ախրը ասում եմ, որ մեր նաշախիկը սուտ չի ասի. նա ֆնասակար մարդկանց աւելիշուտ և աւելի լաւ է ճանաչում:

IV

Եղանակը թարմ է, երկինքը՝ պայծառ. ուրախ տրամադրութեամբ, ինքս ինձ քթի տակ մի երգ մրմոալով՝ անցնում եմ դէպի մօտակայ բլրի ստորոտում գտնուող գիւղը: Վաղուց է, որ այնտեղ չեմ եղել. ամիսը լրացել է արդէն. կարօտել եմ. այնտեղ ինձ առանձին սիրով են ընդունում. գիւղացիք համեմատաբար ինձ հեշտութեամբ են հասկանում և որոշկազմակերպւած ոյժ են ներկայացնում տեղական մի քանի տգրուկների համար: Այդ պատճառով՝ վերջիններիս համար ես ատելի եմ, և նրանք բացարձակ ու դադտնի կոիւ են յայտարարել ինձ, «ֆնասակարիս». իսկ այդ ինձ հաճոյք է պատճառում:

— Բարի օր, Աստուած դուաթ տայ, — կանչեցի դիմացս ելած գիւղացուն, որը մարազի համար տեղ էր փորում:

— Աստծոյ բարին. բարե կկար, — պատասխանեց նա, աւելացնելով. — Ինչ խարբը ես բերել... քաղաքում փամփուշտը քանի՞ է: — Չքանում է ուրախ տրամադրութիւնը.

« փամփուշտը քանի է » — անն իրականութիւնը .
 և նորօրինակ նա խոյն կը զարթոցեալ փոխարէն՝
 թշնամութիւն սերմանեց և մշակած արտերի
 փոխարէն՝ ստեղծեց գաշտեր պանկացաւ :

— Գիւղը չը մտնես . — յետեկցս կանչեց գիւղացին . — Օճիցէնն այնտեղ է հարիւր կողակնե-
 րով :

Ծանր մտքերով պաշարած ծոռւմ եմ ճա-
 նապարհս և մտնում մի այլ գիւղ : Այնտեղ բո-
 չարն ինձ ճանաչում է . և բայց սովորաբար
 ժպտանալով և ուրախական զբարեւոյնս կեկեղծ-
 ներով ինձ զիմաստրող գիւղացիք այս ան-
 դամ մտայլ էին . և իմ սիրտիւր բարեկեցիս՝
 նրանք պատասխանում էին . այնպիսի ժպտով,
 որի միջից սիրտ խորտակող կակիծն էր յո-
 լում :

— Կարգն, — ասաց նա, — գիտեմ . ըրագրի երես
 չես տեսել . Այնօր եմ ստացել . այդտեղ սիւր-
 պրիզներ կը գտնես :

Եւ բաց արի ձեռքս ընկած արաջին համա-
 բուր, կարդացի . . . զարմացայ : Այնտեղ թէ ևս
 և թէ մեքսնք, որ անպանծի տանջանքներով
 տընում էին ժողովրդի վիճակը մի քիչ թեթե-
 շացնելու . որ գիշեր-ցերեկ տարւած էինք
 միայն մի մտքով, թէ՛ գիւղական թանձր խա-

ւարի միջից ինչպէս լուսոյ ճառագայթներ
 անց կացնենք, այնտեղ ամենքս մի-մի սրի-
 կայ, մի-մի գազաններ էինք ներկայացրած :

Ժողովուրդը հեծում է այդ վաճախիչների
 արշաւանքներից, — գրեած էր թերթում : Ո՛չ մի
 միջոց չը պիտի խնայել նրանց հալածելու
 համար, որ իբրև մի անպայման փաստակար
 տարր հասարակական կեանքն են թունաւո-
 րում : Քայքայւած գիւղացիութիւնն այլ ևս
 անվարող է որ անց նման ձրիակերներին իրենց
 աղի-քրտինքով դատած կօպէկներով կերա-
 կրելն :

Բայ արի երկրորդը, չորրորդը . . . և ամեն
 տեղ նոյն « արտասուքը » : Ապշած մտնեցի էի
 ըստեցիին ճայեիին :
 — Ի՞նչ է, զարմացել ես, — ասաց նա, — մի
 զարմանայ . տեղները փափուկ է, աքք, ան-
 վտանգ, և ոչ ոք չի հալածում նրանց . ույզ-
 պիսի պայմաններում անճամեւտ հեշտ է ժո-
 ղովրդի մասին « հողայր » . . .

Բոլորը պէտք է հաւաքւէին ուսումնարանի
 դահլիճը . մարդիկ անմխիթար էին, վշտահար,
 արիւնստ դէպքերի յորձանուտում տարբեր-
 շեխիւ : Կարեւոր էր սիրտիկ սիրտ տար
 Յուսանաւորութեան բռնկներում երբեմն մի խրա-
 խուտական խօսքը — բղխած կարեկցող սրտից
 թեւաւորում է մարդուս : Իսկ այդ օրը մի այն-

պիսի օր էր, որ սարսափահար գիւղացիներին անհրաժեշտ էր քաջալիրութիւնը, անհրաժեշտ էր օգնել նրանց պարզելու այն հեղձոցիչ դրութիւնը, որ նրանց համար էր ստեղծուել:

Մարդիկ արդէն հաւաքուել էին, որոնց թոււմ և գիւղի վաշխառուները. ես աստիճանաբար աշխատում էի ուրախ տրամադրութիւն տեսողձեւ նրանց մէջ, որպէս զի ցոյց չը տամ թէ ես էլ յուսահատուելու չափ յոգնել եմ:

Բայց հէնց որ ուզում էի բուն ինդրին դիմել, ներս մտաւ գիւղացիներից մէկը:

— Այն գիւղիցն եմ գալիս, — ասաց նա, — կէս օրից յետոյ եկաւ պրիստաւը, կանչեց բոլոր գիւղացիներին, և ասաց, — դուք ամենքդ իանգաբիշներ էք, որովհետեւ թոյլ էք տալիս, որ զանազան փաստակար անձնաւորութիւններ բռնեն ձեր մէջ և խօսեն յանցաւոր զրոյցներ, փոխանակ այդպիսիներին բռնելու և կառավարութեանը յանձնելու՝ դեռ հաց էլ էք տալիս, հիւրաւիրում էք և նրանց հետ միասին ժողովներ գումարում, որով ցոյց էք տալիս ձեր անվստահելի լինելը: Յետոյ մի քանի խրատներ ու սպառնալիքներ տաւ, քապա զայրագին աչքերը ոլորեց, դուրս եկաւ և շտապով գալիս է այստեղ. ես վազէվազ եկել եմ, որ իմաց անեմ. մանաւանդ որ քո անունդ էր շարունակ տալիս. — աւելացրեց լրաբերինձ գառնալով:

Կարճատև լուռութիւն տիրեց. այդ միջոցին մի ուրիշը ներս ընկաւ:

— Շնտ, շնտ, — հեալով վրայ տաւ նա, — պրիստաւը մի րոպէից յետոյ գիւղուժը կը լինի. քո այստեղ լինելիք նրան իմաց են տւել:

— Հիմա գնացէք, ու պատասխանը տւէք, — յոխորացիին սեահոգիներից մի քանիսը. — ազատութիւն, արգարադատութիւն... շատ էիք ախորժակներդ գրգռել. դէ կերէք:

— Էլ մի կանգնի, — թեհցս բռնեց ուսուցիչը. — գնա, գիւղի միւս ծայրովը կանցնես:

Ես դուրս եկայ, նստեցի ձիւս և ուղղեցի դէպի հակառակ կողմը:

VI

Աստեղագարդ գիշեր էր. ամառային զով գիշեր: Մի ծանօթ թախիժ եկել, նստել է սըրտիս և սարի պէս ճնշում է: Երկար ժամանակեայ լարւած, ջղային դրութիւնն ազդել է վրաս, և դառն խոհերն այդ կէս գիշերին եկել, պատել են ինձ: — Գործել եմ եռանդով, ոչինչ չեմ ինայել, անձնական ապահովութիւնս վաղճ է, որ վտանգի եմ դրել. կարեկցել եմ բոլոր վշտաւորներին, կարողութեանս չափ բռնել եմ նրանց ձեռքից՝ դէպի լոյս քաշելու. աշխատել եմ համաժողովային սուրբ գաղափարների սերմերը գցելու և աշխատաւոր ժողովրդի կրած տառապանքներն ինձ վրայ եմ զգացել: Շատ անգամ սոված, շատ անգամ

ծարաւ, նոյն իսկ հիւանդ՝ ես չեմ դադարել գործելուց. բայց... քաջալերութիւն՝ ես շատ քիչ տեսայ, մինչդեռ հալածանք՝—միշտ և ամեն կողմից:

«Հասարակական գործչի անւան տակ թագնւած՝ դրանք մի-մի անպատասխանատու հրէշներ են. ոչ մի միջոց չը պիտի խնայել նրանց հալածելու համար, որ իբրև մի վնասակար տարր՝ հասարակական կեանքն են թունաւորում»:

Այդպէս էին գրել մեր մասին այն կուշտ, լիքը թշերով, սիրուն աչքերով, փափուկ մատներով չաղ-չաղ մարդիկը. նրանք էին մեզ ամենախիստ կռիւ յայտարարում:

Ամենախիստ կռիւ... անխ, եթէ այնտեղ լինէի, ուղղակի կը գնայի մօտնորդ և կասէի.— Ձերդ չաղութիւն, ուշադիր հղէք մերում նիհարութեան և պատասխանեցէք. դուք, որ ոչինչից երկիրդ չէք կրում, որ այդքան քաջ էք և ամենախիստ կռիւ շեփորն էք հնչեցնում տաք անկիւններից, որտեղ էք կուչ, գալիս, երբ հրաքան է պայթում: Կամ՝ եթէ մահու սպառնալիքով ձեզ ստիպենք, քանի՞ թիքա կարող էք կուլ տալ այն թեփախառն կորեկ հացից, որոնցով «հրէշներն» են եօլա գնում:

Ի՞նչ կը պատասխանէին. երկի մի շաքք յօգւածներ ևս կը շարէին, թէ ինչպէս գաւառական բաշխուղուկներից մէկն իրենց վրայ բռնութիւն գործ դնել ցանկացաւ, յետոյ աղետաբան շեշտով կաւելացնէին.— «եթէ քաղաքում

մեզ նման մարդկանց վրայ բռնանում են, հապա ի՞նչ կը լինեն անելիս գիւղերում»:

Չաղ-չաղ, դրիչ բռնել իմացող մարդիկ միացել են գիւղական տղորուկների հետ, և կռիւ յայտարարել մեր դէմ: Ի՞նչ անել, չը թողնել բոլորը, չը հեռանալ այս տանջալից ճանապարհից: Ախր ես էլ մարդ եմ, հանգստանալ, կեանք վայելել եմ ուզում առանց չարչարանքների:

Գնամ, նստեմ քաղաքներում, ապահով, հանգիստ, և շանթեր տեղամ այնտեղից, ժողովրդի անուշով կեղծ արտասուք թափեմ, պախարակեմ բոլորին, կոչեմ հրատարակեմ, ես էլ չաղանամ...

Եւ մութ գիշերին՝ յուսահատութեան առաջին նշորներն էին այդ, որ ծագեցին իմ մէջ, և մի բողբոջ նոյն իսկ վճռեցի,— թողնել, հեռանալ ընդմիշտ: Թող այժմ էլ ուրիշները գան:

Գնալ, հեռանալ... Բայց դա մի վայրկեան էր միայն: Միտքս լուսաւորեց, իմ առաջ կենդանացան գիւղացիների կնճռոտ ճակատները, կոշտացած ձեռները, տեսայ նրանց, որ միամիտ աչքերը դէպի ինձ յառած՝ կարծես պատգամի են սպասում. տեսայ և նրանց, որ ուրախ-ուրախ դիմաւորում են ինձ և պատրաստակամութիւն յայտնում՝ ինձ հետ տխրելու, ինձ հետ ծիծաղելու:

Մտայլ մտքերս փախուստ են տալիս ինձնից, սիրտս բացում է, հոգիս խաղաղում:

Թող սև հողիները, խօսքի ասպետները բա-
ռերով խաղան, այդպիսիները միշտ կենդանի
գործի թշնամիներն են եղել:

Վճռում եմ, և առաջ անցնում:

Սակայն ուր դնամ. այն գիւղը, դէպի ուր
ես եմ դիմում, դեռ շատ հեռու է, այնքան իմ
մասին չեմ մտածում, որքան ձիուս: Անբա-
ժան ընկերս է նա, և ինձ հետ փախտական:

Իջայ մօտակայ հովտում, խոտի դէպ կար-
ծին կապեցի դէզին, իսկ ես մէջքս դիմհար
տալով խոտին, աշխատեցի քնել:

Մի ժամու չափ անհանգիստ քնից յետոյ,
նորից ձիու վրայ էիւ Լոյսը բացւում էր. հեռ-
ւում մի սև զանգւածի նման՝ գիւղը երևաց,
և երբ արևի առաջին ճառագայթները սարերը
նեղեցին, ես գիւղը մտայ:

VII

Կէսօրին մօտ դուրս եկայ գիւղամէջ, ուր
հաւաքւել էին գիւղացիք և առանց միմեանց
հասկանալով՝ գոռում գոչում էին բարձրացրել:
Միայն մէկի ձայնը շատ բարձր էր հնչում.
շարունակ բղաւում էր. ասը մինչև երբ, մին-
չև երբ...

Ես նրան ճանաչում էի. նա մի բաղմանդամ
ընտանիքի հայր է, խիստ ճշմարտախօս, վե-
րին աստիճանի աշխատասէր մարդ, բայց
միշտ էլ աղքատ, ուստի և՛ խօսքն անց չը կե-

նող: Եւ եթէ այսօր նրա ձայնն աւելի բարձր
էր հնչում, ապա այդ նշան էր, որ մի խոշոր
անառիկարու թիւն է կատարւել:

—Այդ ի՞նչ է պատահել. — մտեհնալով՝ հարց-
րի նրանց:

—Ի՞նչ պէտք է լինի, տուններս քանդւում
է. — խորշմած դէմքով կանչեց գիւղացիներից
մէկը. — 150 ծխից է բաղկացած մեր գիւղը,
բայց 150 հատ ցորեն դրելու տեղ չունինք:
Մինչև հիմա, էհ, մի կերպ եօլա էինք գնում.
կալւածատիրոջ հողերն էինք հերկում: Հիմա
էլ էդ տնաւերը եկել է, երկու ոտը մի կօշիկի
մէջ դրել, թէ դուք էք, որ այս, այս պայման-
ներով պէտք է վարեք հողը. անառիկ պայ-
մաններ, որ մեր ծծկեր երեխաներսն էլ եթէ
գիշեր-ցերեկ հողի վրայ բան անենք, վերջումն
էլի մի բան դեռ պէտք է պարտք անենք,
կալւածատիրոջ աչքը կոխելու, պայմանները
լրիւ կատարելու համար: Ի՞նչ անենք, թե՛
դիմենք. առաջւայ կարգով հաղու էինք ապ-
րում. իսկ հիմա խօ սովից կը կոտորւենք.

—Տօ՛, կամաց խօսիր, անաշէն, — նկատեց
մէկը. — չիս տեսնում, որ ճնա՞ գալիս է:

—Այ ո՞տը կտարէր, ջնանգամը դնար, — մըր-
մըռաց գիւղացին, ու լռեց:

Ահա նա, սարգը. խունացած պինջակը հա-
զին, ներկը վեր եկած երկարավիղ կօշիկները
ոտներին, պլտբան, թափառող աչքերով և մի
հին գլխարկ գլխին փակցրած: Մենք վաղուց-
ւայ ծանօթներ էինք. դեռ անցեալ տարի մենք



1265-2009

մի այլ «հաշիւ» էինք ունեցել միմեանց հետ, որի համար բանտի համը զգացի: Եւ երբ այժմ ինձ տեսաւ գիւղացիներէ մէջ, հարցաւեան կերպով ունջերը վեր քաշեց, զարմացաւ, տատանւեց,—առաջ գնալ, թէ՛ յետ, ապա հաստատուն քայլերով, բերնին մի զզւելի, ըծնողի ժպիտ խաղցնելով՝ դիմեց դէպի ինձ:

—Յնչա՛փ ուրախ եմ,—կանչեց նա,—բարի լինի զալուստդ: Ուրեմն բանտից ազատելուց յետոյ իրաւունք ստացել ես այստեղերքը լինելու... շնորհաւորում եմ:

Այդ մի սոսկալի, գարշանք ազդող ակնարկութիւն էր, թէ՛—ձայնդ կտրիւր, ոչինչ չը խօսես, թէ՛ չէ՛ նորից բանտ կը նստես:

Գիւղացիները յուզած, սպասողական դրութեան մէջ լարւել, մնացել էին, թէ ինչ պէտք է ասի աղան. սիրտը ողորմութիւն ընկել է, թէ աւելի է քարացել:

—Չի՛ լինում, էլի՛ չի՛ լինում,—մրմռաց աղան, ինքն իրեն,—էս հաստագլուխ ուսմիկներին խօսք հասկացնել չի լինում... Էնքան ասում եմ, թէ՛ այ՛ մարդիկ, տունս քանդւել է, ահագին միասնեք եմ կրել, քաղաքում ունեցած-չունեցածս այրւել է. եկէք էս գնով հողերը հերկեցէք, որ ես էլ կարողանում ապրել, դուք էլ: Աստուած ուրանում են, և—չենք կարող ու չենք կարող բղաւում... Հը՛, թի՛ն էք ասում—ձայնը բարձրացնելով՝ դարձաւ նա գիւղացիներին.—ուրիշ աղաչողներ կան հո-

ղերիս համար. ինձ գործից մի գցէք. առաջարկած պայմաններս համաձայն էք:

—Չէ, չէ, համաձայն չենք,—կանչեցին գիւղացիք:

—Այն ժամանակ Աստուած ձեզ հետ. սնացէք, կոտորւեցէք առանց հողի. կը տամ ուրիշներէ:

—Ուրիշներէ՛... ի՞նչ կարող է համարձակւել էն հողերը լուծ բերելու. եղները կը մորթենք:

—Ի՞նչ, թի՛ն...—որտաց կալածատէրը,—Աստուած է վկայ, էնքան կողակներ թափել կը տամ էստեղ, որ չէք իմանայ, թէ՛ ձեր կին ու աղջիկը որտեղ թագցնէք:

Ես խոհեմութիւն էի համարել լուռ կենալ, չը միջամտել, ապագայ գործունէութեանս համար խոչընդոտ չը ստեղծելու համար. սակայն այդ ճիւղի վերջին ասածները կայծակի նման զարկեցին սրտիս և ես վեր թռայ:

—Ա՛յ գիւղացիներ, տես՞ք ինչ ասաց ձեր աղան, ձեր գիւղի հայրը... այն հողը, որ ձերն է, այն հողը, որ տարիների ընթացքում ձեր քրտինքովն է ոռոգւել, նոյն այն հողը տասնեակ տարիներով սրա նման ցեցերն իրենց ձեռքը զաֆթած՝ լափել են արդիւնքը, առանց քրտնելու, առանց տանջւելու... նայեցէք դրան, լա՛ւ նայեցէք, կարճ է դա գոնէ կէս ժամ մա՛ճ բռնել. կարճ է գոնէ մի անգամ մանգաղը ցորենի ծղօտների վրայից քաշել. նրստե՛լ է երբ ևրցէ կամսի վրայ. գիշերները սրթսրթալով արածացրել է եղները, որպէսզի

առաւօտեան նրանք լուծը լաւ քաշին. սայլի վրայ նստած, արեւից խաշեւելով խուրձեր կրել է... երբէք, երբէք. հանդիսա նստել է տանը, իսկ դուք արել էք այդ բոլոր աշխատանքները, քրտնել, չարչարել, և երբ ցորենը մաքրած պատրաստուած է եղել ու կալի կողքին դարսած՝ նա եկել, մեկնել է չափը, թէ՛ բաժինս տւէք: Ի՞նչ բաժին... նրան համար, որ հողն իրան է պատկանուել, բայց այդ ո՞վ աւսաց, թէ հողը Տրանն է. ո՞վ տւաւ. այդ ինչպէս կարելի է, որ 150 ծուխ ունեցող մի գիւղ մի հաւ բաց թողնելու տեղ չունենայ, իսկ մի մարդ, միմիայն մի մարդ՝ հազարուոր օրավարների տէր լինի: Եթէ մինչև անգամ հաշուենք, որ հողը նրանն է եղել, և հողի գինը 1000 բուրլի է, ապա տամուկալ տարիների ընթացքում նա քսան անգամ հանել է գինը, քսան անգամ աւել հազար բուրլիներ է ստացել: Եւ երբ լաց էք լինում, աղաչում, պահանջում, որ ողորմած լինի, նա՛ խիղճն ուրացած՝ մատն է թափ տալիս և ձեր կրօնանց ու աղջիկների պատին սպանալիքներ կարդում: Այդպէս է եղել սկզբից մինչև այժմ, այսպէս չը պէտք է լինի այսուհետև: Կազմակերպւեցէք, ձեր որդկերանց համար լաւ օրեր ստեղծելու. կազմակերպւեցէք, — դրա մէջ է ոյժը, — և երբ ամենքդ գիտակցութեան հասած, ձեռք-ձեռքի տւած ասպարէզ կիջնէք Հող և Ազատութիւն թնդացնելով, այն ժամանակ միայն դուք յոյս ունեցէք, որ այս սպրուկնե-

րը, այս արեւն-քրտինք ծծողները, այս ճրիպ-կեր հրէշներն իրանց աջակիցներով տեղի կը տան, ու դուք կունենաք վերջապէս ձեզից անարդարութեամբ խլւած՝ բայց ձեզ պատկանող Հողն ու Ազատութիւնը:

VIII

Նախկինից աւելի սաստիկ արշաւանք է սկսուել իմ դէմ: Տեղական վաշխատուներն ու «պատուելիները» լարել են իրանց բոլոր ուժերը՝ ինձ դուրս մղելու, ոչնչացնելու համար: Գիւղացիք շարունակ զգուշացնում են ինձ, մատնացոյց անելով, թէ ի՞նչ հրէշաւոր դաւեր են նիւթում իմ դէմ. իսկ ուսուցիչը մի լրագիր ուղարկեց, հետք մի տոմսակ, ուշադրութիւնս հրաւիրելով ուղարկած թերթի մի յօդւածի վրայ. թերթը ւաց արի:

«Զը կարողացանք ազատել մեզ տանջող, մտրակի տակ տուող զօչիներից — գրած էր այնտեղ. — նրան ից մէկը պտտում է գիւղէ գիւղ, իրան գիւղացիների ինամատար հրատարակում, առօր-փառօր քէֆեր անում, հաւի փափուկ մսիք կարժիր գինով հեղեղում, և արբած գրութեամբ՝ գիւղի ամենաաչքի ընկնող մարդկանց խայտառակում: Մինք զանազան գիւղերից հաւաքւած բանիմաց և մեր պատիւը ճանաչող անհաւորութիւններս յայտնում ենք սրանով մեր ամենախորին զգւանքը՝ դէպի այդ վնասակար ինամակալները և կ'չ ենք

անում հեռանալ վերջապէս մեր միջից, որով
և կը վերանային այն անթիւ պատուհասները,
որ դրանց պատճառով թափուում է մեր խեղճ
ժողովրդի գլխին»:

Ստորագրած էր՝ զանազան հասարակու-
թիւնների դիմաց մի քանի անձնաւորութիւն-
ներ, որոնց անձամբ ճանաչում էի. խօջաներ
էին, տանոււէրեր ու հողատէրեր... Թերթն
ինձ և ընկերներին մի առաջնորդող էր նւի-
րել՝ «Իարձեան հեծեծանք» վերնագրով:

Նոր ընթերցումը վերջացրած, դառնացած
սրտով մտածում էի, որ հեիհե ներս ընկաւ ինձ
հիւրասիրող գիւղացին և ընդհատող ձայնով
ասաց արագ-արագ.

— Գալիս են... թագուիր... մարագի կտրին...
խոտի արանքում...

Ինձ ոչ ոք չը տեսաւ, ես արագութեամբ
մարագը բարձրացայ և մտայ ցանուցիր խո-
տերի տակը: Նոյն այդ միջոցին փողոցում
երևաց ինձ որոնողների շղթան, որոնց առաջ-
նորդում էր իմ ծանօթ կալւածատէրը...

Մինչև երեկոյ մնացի այդտեղ:

— Իջիր, — ասաց գիւղացին, ինքնագոհու-
թեամբ, — Իջիր, գնացել են:

— Է՛, թնչ էին ուզում. — դարձայ ես նրան:

— Ի հարկէ՛ քեզ. կալւածատէրը պնդում
էր, որ դու այստեղ ես, բայց մենք երդե-
ցինք, որ քեզ չհենք տեսել, առաջարկեցինք
ման գալ բոլոր տեղերը և եթէ գտնեն, որ քեզ

թաղցրել ենք, մեզ ամենախիստ պատիժը
տան:

Կալւածատէրը հայհոյեց, օֆիցէրն ու պրիս-
տաւը բարկացան, յետոյ խոտ ու գարի պա-
հանջելով՝ սուին ձիանց և մի ժամ առաջ՝
դուրս եկան, գնացին:

XI

Մի այլ գիւղում եմ. բայց ինձ ո՛վ էր հան-
գատութիւն տւել, գիւղից դուրս եմ գիշերում,
որովհետև յայտնել էին, որ գիշերն ինձ հա-
մար որսորդները թաղարդ են լարում: Զը
նայելով իմ մերժումներին, դուրսն ինձ հետ
գաղտնի կերպով միացել են գիւղացիներից
հինգ երիտասարդ. եւ մենք վեց հոգով՝ բա-
ւական հեռաւոր ժայռերից մէկի ընդարձակ
ապահով խոռոչում մեծ խարոյկ ենք վառել
չորս կողմը նստել ու քնոցը զրոյցներ անում.
Իսկ նրանցից մէկն էլ իրենց հետ բերած հա-
ւերն է կտրատում, ու շամփուր քաշում:

Անմոտանալի գիշեր...

Երբ ընթրիքն արել, վերջացրել էինք, գիւ-
ղացիներից մէկը, որ բաւական ժամանակ
լուս ու մտախոհ երեսիս էր նայում, ասաց.

— Ախր, իսկապէս չեմ կարողանում պար-
զել, թէ ինչու, օրինակ, դու այս բոպէիս այս-
տեղ ես, և ո՛չ քաղաքներում, կամ հէնց ձեր
տունը. ինչու ես սարէսար, չօղէջօլ ընկել. չէ՞
որ եթէ բռնեն...

— Շատ լուս, — ասացի, — ես մի ուրիշ հարց կը տամ. ինչո՞ւ, օրինակ, դու քո այստեղ գտնուող ընկերներուդ այս բոլորէիս ձեռք տնելու մը չէ՞ք, ազատով պառկած. չէ՞ որ, երբ ձեզ տեսնեն փնձ հետ միասին՝ ձեզ էլ կը պատժեն:

— Խօսակիցս քիչ լսեց ու պատասխանեց.

— Ախր այդ նամարդու թիւն կը լինէր, ինչպէ՞ս կարելի էր քեզ առանց ընկերի՝ մենակ թողնել սարերում, առանց վալադի, մանաւանդ որ քեզ սիրում ենք:

— Այ, հէնց քո սապօրի մէջն է իմ պատասխանս: Ես էլ ձեզ եմ սիրում, բոլոր աշխատաւոր գիւղացիներդ, սիրում եմ ձեզ ձեր բոլոր վշտերով, ձեր բոլոր տանջանքներով և նամարդու թիւն չէ՞ր լինի իմ կողմից, երբ ժողովրդին թողնէի մենակ, առանց վալադի: Ինչպէս որ դուք այս սարերի վալադն էք և ինձ բերել էք մի ապաստարան, որտեղ հանդատանալ կարող եմ, նոյնպէս և ես վալադ եմ մի ուրիշ ճանապարհի, որ գրքերումս եմ սովորել, և ես պարտաւոր եմ ցոյց տալ իմ կարողութեանս չափ այն ճանապարհը, որ տանում է դէպի հանդատանալու ապաստարան: Ծիշտ է, այն ճանապարհը երկար է և վտանգներով առատ և աւելի շատ չարչարանք, տանջանք է պահանջում, բայց ինչ պէտք է արած, երբ այնտեղ է միայն և միայն ճշմարիտ փրկութիւնը: Եւ այդպէս քո մտքում:

— Բնկ մասադ, եղբայր, մի քանի էլ ես ասեմ սիրտս դի՛ շնայ, — դարձան երկրորդ գիւ-

ղացին, — մենք մեր էս աչքերով տեսնում ենք, թէ ինչքան ես նեղութիւններ քաշում, և մեր աղանջներով ենք լսում, թէ ինչպէս ես դադում, ճակատին խփում փիս մարդկանց փիս արարքները. բայց ինչո՞ւ է մեր քահանան ասում, որ դու անասուած ես, Բրիտոտին չես հաւատում, և քո հոգին դժոխք պէտք է գնայ:

— Չիր քահանան սուտ է ասում, որպէսզի ձեր սիրտը պղտորէ, և դուք ինձ առէք. ճիշտ բայր, գնա արտեղից: Իսկ ձեր և ուրիշ շատ քահանաներ հէնց այդ են ազում, որ հոռուս առատ լինի. չէ՞ որ ես խանդարում եմ նրանց, որովհետև հասարակութեան առջ ասում եմ. — տէրտէր, Բրիտոտս ասել է, թէ՛ քաջ հովիւր իր անձը դնում է իր ոչխարների համար. իսկ դուք ո՛չ միայն անձերնիդ չէք դնում, այլ ոչխարների բուրգն ուզում էք կաշի հետ կըտրել: Եւ այդպէս քո մտքում:

— Ես նրանց ասում եմ, — դուք խաւարն էք, որովհետև խաւարեցնում էք լոյսը, և եթէ մէկը ձրագն ուզում է բերել, լոյս տայու համար, փչում, հանդցնում էք, մարդկանց վախեցնում դժոխքի անունով, հալած արձիճով, սասանաներով, որպէսզի ժողովուրդը միշտ երկիւղի մէջ մնայ, աչքերը կապած, խաւարում լինի և դուք միշտ իշխող լինէք, ու նրանց կարողանաք խաւարի մէջ կթիլ, ինչպէս մի կովի: Ահա թէ ինչու է ձեր քահանան ինձ դժոխքի արժանի համարում և Բրիտոտին չը հաւատացող կոչում: Այժմ ձեզ

հարցնեմ. երբ և իցէ նա խօսել է ձեզ հետ Քրիստոսի մասին, պատմել է թէ ինչպէս նա իր գաղափարների համար խաչը բարձրացաւ. պատմել է, թէ նա ինչպէս էր ապրում.—միշտ թշուառների հետ, տանջողներին օգնութեան հասնելիս, միշտ նախատելիս իր կատարած ճշմարիտ գործերի համար, բոբիկ ոտներով, գլուխը բաց, մի հաւարակ գօտիով մէջքը պնդացրած, և ամեն ըոպէ պատրաստ իր կեանքը զոհ բերելու ժողովրդի համար.—այդպէս է Քրիստոսը. սակայն այդպէս են նրան «հաւատացող» քահանաները...

X

Մի շաբթից յետոյ մի այլ գիւղում եմ: Հաւաքւել ենք մի ահագին ընկուզնու տակ, թւով մօտ երկու հարիւր հոգի: Մի ծերունի նկատելի է, որ շատ է ցանկանում մի բան ասել, բայց յարմար առիթի է սպասում:

—Սրտումս մի բան կայ, պէտք է ասեմ,—ասաց նա վերջապէս.—թէև դու կուռն ես հարուստների դէմ, և ես էլ հարուստ եմ, բայց ինչ մեղքս թագցնեմ, հողի ունիմ տալու, կոխուք արգար է: Եւ երբ տեսնում եմ, որ շատ չարամիտ մարդիկ քեզ բամբասում են, քեզ հայնոյում են, կարծում եմ թէ ինձ են հայնոյում. երբ լսում եմ թէ բռնւելուց հազիւ ազատւեցիր, սիրաս թրթռում է: Ե՛հ, աշխարհ չեմ տեսել, գիր չեմ կարդացել, սրտին էլ

լեզուով լաւ ասել չեմ կարողանում. կը ներես: Սրտինս այս է.—ասեցի եկեղեցու համար մի պատկեր բերել տամ, յիշատակ մնայ. բայց մէկ էլ մտածեցի, որ դու ինձանից աւելի լաւ կը գիտենաս, թէ ինչն է աւելի հարկաւոր. մարդկանց հոգսը քաշողը գու ես. նրանց դարդը դու ես հասկանում. անձ 300 ըուբլի. կարգադրիր, ինչպէս ուզում ես:

—Շէ՛ն կենաս, շէ՛ն կենաս,—ձայն տւին գիւղացիք այս ու այն կողմից:

—Եղբայրներ,—ասացի նրանց,—հայրիկը ցանկացել է եկեղեցու համար մի պատկեր բերել տալ. բայց այստեղ, երբ մեր շուրջը հազար ու մի ցաւեր կան, երբ մենք խաւարում խարխափում ենք, երբ մեր դարդերը հազարներով են, որոնցից գոնէ մէկին դարման տանելը մեծ մխիթարութիւն է, ուստի եկեղեցին պատկերով զարդարելով մենք սխալւած կը լինէինք: Ուստի մեր ալևորը չը պիտի նեղանայ, եթէ այս փողը նշանակւի այս գիւղում մի ուսումնարանի հիմքը դնելու: Թ՛ղ մեր երեխաները կարգան այնտեղ, լուսւորւեն, աշխարհիս չարն ու բարին, գեղեցիկն ու վատը ճանաչեն, որպէսզի մեզ նման տգէտ ու խաւար չը մնան, և ուսումնարան հիմնարկողի յիշատակն օրհնեն:

—Որդի՛, ասացի, որ դու ինձանից լաւը կիմանաս.—ասաց ծերունին,—սո էս հարիւրն էլ աւելացրու էդ նպատակին:

Օրինակը վարակող եղաւ:

— Տասն րուբի էլ, ես եմ տալիս, — ասաց
գիւղացիներէից մէկը, փողը հանելով:

— Բասն էլ ես:

— Հինգն էլ ես:

Եւ այդպէս գումարը կամաց-կամաց մեծա-
ցաւ. իսկ նրանք, որ փող չունէին, պարտա-
ւորուցին որոշ օրեր ձրի աշխատել շինու-
թեան վրայ, կամ քար ու հող կրել:

— Տեսնում էք, — ասացի, — միացեալ ոյժն
ինչեր է անում: Մենակ մի մարդն ի՞նչ կա-
րող է անել, եթէ մինչև անգամ ամօարներով
բարի ցանկութիւններ ունենայ: Բայց երբ
փողովորդն է միանում, համայնքն է գործի
գուրս գալիս, այն ժամանակ մերանում են
բոլոր խոչնդոտները, հարթւում է ճանա-
պարհը, և շատ անկարելի բաներ կարելի են
դառնում: Պէտք է սովորել միացեալ, համայ-
նական ուժերով գործեր կատարել: Այստեղ
տոնւագն կը լինին երկու հարիւր րուբի բան
ու թի վերցնող, առհասարակ աշխատանքի
ընդունակ մարդիկ. եթէ այդ բոլորը միասին
միայն երեք օր ծառայելու դուրս գան գիւղի
օգտին՝ հասարակական շատ աղէտների առա-
ջը կ'առնէր: Անցեալ օրը, երբ ես այստեղ էի
գալիս, գիւղի տակի ճանապարհի մի անկիւ-
նը փլուել, ձորն էր թափւել. մենակ մի մարդ,
ի հարկէ, ամիսներով ջանք պէտք է թափէ՝
փլածքը շինելու. և կարող է պատահել, որ
իսկի չը շինւի. մինչդեռ ձեր սայլերը պէտք
է խլւեն այն միւս անյարմար ճանապարհի

ցեխերի մէջ, հզներն ու գոմէշները տանջւեն,
գնացէ և սայլի աղը կամ լուծը կ'ուտրւի, կամ
թէ՛ հէնց կենդանիներն ընկնեն, ցրասեն,
իրենց տիրոջ տունը քանդելով: Բայց այդ
չարիքն իսկոյն կը վերացւի, եթէ իմ յիշած
երկու հարիւր հոգին՝ մէկը բահով, միւսը
քլունգով, երբորդը մի այլ բանով դուրս գալին
փլածքը շինելու, ճանապարհն ուղղելու հա-
մար:

— Ուղիդ եմ ասում, շատ ուղիղ, — կանչեցին
գիւղացիները. — մենք չենք հասկալի. իսկ որ
այդ ձևով անթիւ գործեր կարելի է հեշտու-
թեամբ վերջացնել:

Ապա դարձան իրարու.

— Տղէրք, վաղն ով ինչով կարող է, թող
առաւօտեան դուրս գայ գիւղի տակը: Աստու-
ծոյ օգնութեամբ՝ դեռ արեգակը սարին չը
նստած ճանապարհը առաջւանից էլ աւելի
ուղիղ, էլ աւելի հաստատուն շինած, պատ-
րաստ կը լինի:

Եւ ուրախ-ուրախ ցրւեցին տները:

XI

Այստեղ կտրւում է գաւառականի յիշողու-
թիւնները. բայց տեսարակին կցւած է մի նա-
մակ, որ այդպէս յանկարծ ընդհատուելու պատ-
ճառներն է պարզում.

«Ինձ յանկարծ ձերբակալեցին. — գրւած է
նամակում. — երբ բռնած տանում էին, վաշ-



խառններից մէկը, որին կատաղի կերպով հալածել էի ամեն տեղ, մատը թափ տուաւ և ասաց.— Գնա՛, գլուխդ շատ էր տաք, մի քիչ կը հովանայ այժմ: Պարզ էր, որ ես դաւադրութեան զոհ էի, և սողունները գլուխ բարձրացրած՝ իրենց յաղթութիւնն էին տօնում:

Առաջին անգամը չէ, որ բանտ եմ տեսնում. բայց այս անգամ դժւար թէ կարողանամ տանել. առողջութիւնս քայքայւած է, և շարունակ ենթակայ եմ ծայրայեղ յուզմունքների, որովհետև ամենայեւին պաշտօնեան ինձ անպատուում, հայհոյում է, և ինձ ստորացնելու մէջ հրճանք զգում: Ի՞նչ կը լինի վերջը. — յաւիտեան բանտում կը մնամ, տաժանակիր աշխատանքների կը քշւեմ, թէ՛ մի աւելի ծանր պատժի կենթարկւեմ, այդ չէ այժմ իմ սիրտս կրճողը, այլ այն, որ սկսածս գործը կիսատ է մնում...

«Բայց չէ. ընկերներս, իմ չազմաթիւ ընկերներս կը շարունակեն այն. ես թախանձում եմ. յայտնիր նրանց, որ ես ամեն մի զատիժ թեթև կը զգամ, փայփայելով այն յոյսը, թէ նրանք անտէր չը պիտի թողնեն աշխատաւոր ժողովուրդին, թէ նրանք զուրս կը գան նրա ցաւերն ամոքելու»:



21479